ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 12 >> 10 2011 թվական N 123 քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1-րդ և 77^2-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20 հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2011 թվականի վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագիրը>>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքում վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Կառլեն Աբրահամյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, խմբի ղեկավար

Զարիկ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ:

Սուրեն Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ:

Սերգեյ Իսրայելյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդի համայնքում 7 աշխատանքային օրվա ընթացքում, 2008 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2011 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանի համար իրականացնել վարչական և ֆինանսական հսկողություն (ժամկետ՝ 2011 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2011 թվականի հոկտեմբերի 25-ը):

2) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել արդյունքները և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ա. ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է